ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
էլ. փոստ՝ alaverdi.lori@mta.gov.am

N 243
06 մարտ 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Նալբանդյան.

Ձեզ ենք ուղարկում Ալավերդի համայնքի ղեկավարի 2017թվականի N 91-Ա - N 93-Ա որոշումները:

Առդիր՝ 4 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ.ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Էվոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 91-Ա

ՀԵՂԻՆԵ ԱՂՎԱՆՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Ալավերդու համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 28.02.2017թ. թիվ 03 արձանագրությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի քաղաքի Դեբեդի 19/1 հասցեի բնակիչ Հեղինե Հովհաննեսի Աղվանյանին նշանակել անչափահասներ Հայկ Սուրենի Խաչատրյանի /ծնված 05.07.2003թ./ Դիանա Սուրենի Խաչատրյանի /ծնված 20.08.2005թ./, Արեն Կարենի Խաչատրյանի /ծնված 17.06.2009թ./ խնամակալ:

2. Հեղինե Հովհաննեսի Աղվանյանին իրավունք վերապահել ստանալու և տնօրինելու անչափահասների հասանելիք թոշակը, նպաստը և դրամական այլ մուտքերը՝ անչափահասներին պահելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

2017թ. փետրվարի 28
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՄԱՐՏԻ 2017թվականի N 92-Ա

ՍՈՒՍԱՆՆԱ ՇԱՎԻՆՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Ալավերդու համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 01.03.2017թ. թիվ 04 արձանագրությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի քաղաքի Ակներ թաղամասի 6-րդ փողոց, տուն 26 հասցեի բնակիչ Սուսաննա Եղիշի Շավինյանին նշանակել անչափահաս Նվեր Արթուրի Շավինյանի /ծնված 03.07.2010թ./ խնամակալ:

2. Սուսաննա Եղիշի Շավինյանին իրավունք վերապահել ստանալու և տնօրինելու անչափահասի հասանելիք թոշակը, նպաստը և դրամական այլ մուտքերը՝ անչափահասին պահելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

2017թ. մարտի 01
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՄԱՐՏԻ 2017թվականի N 93-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 731-Ն որոշումով, 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ կետով, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված հասարակական օբյեկտը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, «ԹԻՎ 1 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված 20.02.2017թ. թիվ 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1.Ալավերդի քաղաքի Թումանյան փողոցի հարավային մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 18.6 քմ արտաքին մակերեսով (13.6 քմ ներքին մակերեսով) հասարակական օբյեկտի մասի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:

2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Թումանյան փողոցի հարավային մասում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0158-002), 2016թ. ինքնակամ կառուցված, 13.6 քմ արտաքին մակերեսով հասարակական օբյեկտը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00082 հա մակերեսով հողամասով:

3. Ալավերդի քաղաքի Թումանյան փողոցի հարավային մասում գտնվող հասարակական օբյեկտին տրամադրել Թումանյան փողոց, N 49/8-1 փոստային հասցե:

4. ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 3-րդ կետի համաձայն, վերը նշված հասարակական օբյեկտի զբաղեցրած 0.00082 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ որպես բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության:

5. Շինության զբաղեցրած 0.00082 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

6. Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին. 15 օրյա ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված հասարակական օբյեկտի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

7. Հանձնարարել համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Եգոր Սիմոնյանին, օրինակնացված հասարակական օբյեկտը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

2017թ. մարտի 02
ք. Ալավերդի